ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2013 թվականի N 634-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի <ա> ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մրգաշենի միջնակարգ դպրոց>>, <<Մեղրաձորի միջնակարգ դպրոց>>, <<Բուժականի Գ.Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Հրազդանի Վ.Սարոյանի անվան N 11 հիմնական դպրոց>> և <<Հրազդանի Հ.Պարոնյանի անվան N 12 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված 2013-2014 թվականների ուսումնական տարվա ճշտված կոմպլեկտավորումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանին ներքոհիշյալ դպրոցների ֆինանսավորման ծավալներից նվազեցնել.

1) << Մրգաշենի միջնակարգ դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպություն – 48600 (քառասունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ,

2)<< Մեղրաձորի միջնակարգ դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպություն – 60700 (վաթսուն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ,

3)<<Բուժականի Գ.Ղարիբյանի անվան միջնակարգ անվան դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն – 68300 (վաթսունութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ,

4)<<Հրազդանի Վ.Սարոյանի անվան N 11 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն – 33000 (երեսուներեք հազար) ՀՀ դրամ.

5)<< Հրազդանի Հ.Պարոնյանի անվան N 12 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն – 279200 (երկու հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանի վրա:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ